ՕԲՅԵԿՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՂԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ*

«Այն պատմաբանները, որոնք այսօր էլ փորձում են յոլա գնալ առանց պատմության փիլիսոփայության, մեր քաղաքամերձ այգիներում երեսպաշտորեն ու անիմաստ կերպով Եդեմի դրախտային անկյունների վերականգնմանը ձգտող նուդիստների են հիշեցնում»[1]:

Էդվարդ Կարր

Անկախ պետականության գոյության պայմաններում անգամ մեր հետազոտողների գերակշռող մասի աշխարհընկալումը շարունակում է հիմնվել մարդկային հասարակության զարգացման «օրենքների» ու օրինաչափությունների «օբյեկտիվության» մասին պատերացումների վրա, որոնք ամբողջատիրական մտածողության «խոհանոցից» մնացած «պահածոյի» դատարկ տուփերի նման՝ շարունակում են աղմուկ բարձրացնել հայ պատմագիտությանը բաժին ընկած գիտատեսական փակուղիներում:

Խորհրդային շրջանում վարչակարգի հարկադիր սպասարկուն դարձած հասարակական գիտությունների առաջնային խնդիրը ոչ թե հասարակության՝ որպես ամբողջի, ուսումնասիրությունն էր, այլ **առկա կեցության** «գիտական հիմնավորումը», ինչը պահանջում էր «բացահայտել» նրա առաջ գալու անխուսափելիությունն ու «համապատասխանությունը» բնության մեջ գործառող՝ մեզանից անկախ օրենքների ու օրինաչափությունների օբյեկտիվ բնույթին:

Ամբողջատիրական մտածողության միջոցով պարտադրված նման «օբյեկտիվիզմը» իրականում ոչ մի կապ չուներ ինչպես համաշխարհային գիտատեսական մտքի նվաճումների, այնպես էլ հայ մտքի զարգացման բնականոն ընթացքի հետ: Որովհետև Նոր ժամանակներում, շնորհիվ հայության Մեծ զարթոնքի, հայ ազատամարտի ու նրա ծնունդ ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի, մինչխորհրդային

---

* Ընդունվել է տպագրության 12.06.2014:

1 Карр Э. Историк и факты, «Современные тенденции в буржуазной философии и методологии истории». Ч. 1 и 2. М., 1969. с. 24.

շրջանի հայ քաղաքական ու գիտատեսական միտքը որդեգրել էր մարդու մասին պատկերացումների ճիշտ հակառակ ելակետը, համաձայն որի՝ «Ոչ մի դէպքում և ոչ ոքի համար մարդ-անհատը չպէտք է դիտուի միջոց, միմիայն որպէս միջոց: Նա ամեն դէպքում և ամեն մէկի համար պէտք է լինի միաժամանակ որպէս նպատակ»[2]:

Ճակատագրի մարտահրավերներին ու «օբյեկտիվ իրողություններին» հակառակ՝ Հայաստանի առաջին Հանրապետության հիմքերը դրած սերնդի աշխարհընկալումը նույնպես հիմնված էր օրվա համաշխարհային մտքի ձեռքբերումներին համահունչ՝ պատմությունը կերտող գիտակից ու կամային անհատների ենթակայական գործառույթի կարևորման վրա: Դրան հաջորդած խորհրդային 70 տարիների ընթացքում մեզանում տեղի ունեցավ կրկնակի օտարում՝ միաժամանակ և՛ ազգային մտքի ավանդույթներից, և՛ համաշխարհային մտքի նվաճումներից: Իսկ ահա վերջին 20-ամյակի «ազգային դիմաշրջումներն» իրականում մեր գիտնականների մտածողության հիմքերը չշոշափող «դեկորացիաների փոփոխություններ» էին: Որովհետև մարքսյան մտակաղապարների արտաքին պատյանի հաղթահարումը և պատմական իրադարձությունների ու գործիչների մակերեսային վերագնահատումը մեզանում իրականացվեց ամբողջատիրական մտածողության ավելի խորքային «կոդերի» պահպանման և անգամ դրանց «ազգային» գունավորում հաղորդելու միջոցով: Ավելին՝ ժամանակը ցույց տվեց, որ խորհրդային-պարտադրված իրականությանը ենթարկվելու և համաշխարհային մտքի նվաճումներն ու փորձն անտեսելու աշխարհայացքային մեկնակետերն ավելի ամրակուռ էին, քան Կ. Մարքսի ուսմունքը, որն իրականում ձևախեղվում ու օգտագործվում էր իբրև գործիք՝ ավանդական հասարակությանը բնորոշ օբյեկտիվիստական պատկերացումները «գիտականորեն հիմնավորելու» համար:

Քանի որ այս «ընդհանուր հիվանդությամբ» այսօր տառապում են նաև հետխորհրդային մյուս երկրների գիտնականները, նրա բուժման դեղատոմսերը գտնվում են ոչ թե ամբողջատիրական ավանդույթների «երկրորդ հրատարակության», այլ դրանց ձևավորման արդյունքում՝ 20-րդ դարի 20-30-ական թվականներին համաշխարհային գիտատեսական մտքի հետ մեր ընդհանուր խզվածքի հաղթահարման տիրույթում: Ճշմարիտ ազգայինն ու համամարդկայինը խորքային՝ էտթենական առումով «խնդիր չունեն» մեկը մյուսի հետ. խնդիրը վերջին 20-ամյակի մեր ներփակ կեցության արդյունքում «պահածոյացված» օբյեկտիվիստական մտակաղապարները և դրանցից էլ ավելի խորքային՝ ավանդական հասարակությանը բնորոշ պատկերացումները հաղթահարելու մեջ է:

Ճանաչողական այն ելակետը, որը պատմագիտության մեջ ստացել է «**օբյեկտիվիստական**» բնորոշումը, մարդու աշխարհընկալման գործընթացի **դիսկրետության** (ընդհատության) արտաքին դրսևորումն է, երբ բանականության առաջին առկայծումների միջոցով բացահայտելով իր շուրջը կատարվողի մի փոքր մասը, մնացածի ժամանակավոր անճանաչելիության փաստին նա խիստ պարզունակ գնահատականներ է տվել: Սա մի ուրույն աշխարհընկալում է, որի սաղմնավորումը սկսվել է դեռևս **առանցքային ժամանակում**, երբ մարդկությունն ունեցավ իր առաջին մարգարեներին: Ու թեև Անտիկ շրջանի մտածողները (մանավանդ՝ **Արիստոտելը**) պատմության խնդրակարգի իրենց մեկնաբանություններով

2 **Ֆրանգեան Ե.**, Հասարակագիտական էտիւդներ, ...Բագու, տպարան «Արամազդ», 1917, էջ 18:

զգալիորեն ընդլայնեցին մարդկային ճանաչողության բնագավառը, սակայն հենց նրանք էլ դրեցին ավելի ուշ շրջանի օբյեկտիվիզմի հիմքերը: Իսկ Միջնադարում արձանագրվեց հետընթաց՝ նման իմացաբանական ելակետից դեպի աստվածային գիտելիքի ոլորտը: Բայց Նոր ժամանակների արշալույսին **studio divina**-ի կողքին կրկին հայտնվեց **studio humana**-ն:

Ներկա օբյեկտիվիստական պատկերացումների համակարգը գիտական տեսք է ստացել 19-րդ դարի կեսերին՝ բնագիտության մեթոդաբանության անքննադատ յուրացման միջոցով (թեև նրա աշխարհայացքային-փիլիսոփայական հիմքերը բյուրեղացել են ավելի վաղ՝ **կարտեզյան** մտածողության համակարգում): Սակայն, մարդու մասին գիտությունների ասպարեզում այս պարզունակ օբյեկտիվիզմը հաղթահարվել է շատ արագ՝ արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին (քիչ անց՝ քվանտային մեխանիկան խարխլեց նրա հիմքերը նաև ֆիզիկայի բնագավառում): Բայց, շնորհիվ մինչ այդ օբյեկտիվիստական ճանաչողության վրա հաստատված պոզիտիվիզմի ու մարքսիզմի լայն տարածման, 19-րդ դարի վերջերին ու մանավանդ 20-րդ դարում նման պարզունակ մոտեցումը գտավ իր «երկրորդ հրատարակությունը»:

Հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների բացահայտման հնարավորության հանդեպ անքննադատ հավատի վրա հիմնված այս կարծր համադրույթը, աստիճանաբար փոխակերպվելով «լայնամասշտաբ պատմական մարգարեության»[3], շարունակեց անտեսել սոսկ իր ֆիզիոլոգիական կառուցվածքով կենդանի բնության շարունակությունը հանդիսացող մարդու այնպիսի հատկանիշերը, որոնք թույլ են տալիս նրան իր մտքի ու կամքի միջոցով կերտել սեփական ճակատագիրն իբրև պատմություն:

Օբյեկտիվիստական պատմաճանաչողության ելակետային մոտեցումը ճանաչողության սուբյեկտ-օբյեկտ հարաբերակցության դասական ընկալման, առաջինի կողմից վերջինիս մասին ձեռք բերվող գիտելիքի՝ փորձով ստուգման, այսինքն՝ մակրո (և ոչ թե՝ միկրո) աշխարհում առկա տեսանելի ու շոշափելի առարկաների ու գործընթացների օբյեկտիվության վերաբերյալ պատկերացումների տեղափոխումն է մարդու մասին գիտությունների ոլորտ:

Նման մոտեցման արդյունքում պատմագիտական ճանաչողության առանցքում հայտնվում է ոչ թե պատմությունը կերտող մարդը, այլ վերջինիս գործողությունների ծնունդ՝ անցյալի իրադարձությունը, ինչը պատմակերտման գործընթացի **արդյունքն** է և ոչ թե **պատճառը**: 19-րդ դարում ձևավորվող պատմագիտությունը, առաջնորդվելով նման մեթոդաբանությամբ, մարդու գործունեության այդ **հետևանքը** սկսեց դիտարկել իբրև նրանից դուրս գտնվող «օբյեկտիվ գործընթացների» արդյունք՝ **պատմական իրադարձություն**: Սրանով փորձ էր արվում նյուտոնյան ֆիզիկային բնորոշ՝ սուբյեկտի և օբյեկտի տարանջատման սկզբունքը տարածել մարդու մասին գիտությունների վրա՝ վերջիններիս առաջընթացն ապահովելու պատրանքային նպատակադրումով: Պարզունակ «սոցիալական ֆիզիկայից» սկսած մինչև սպենսերյան «օրգանական զարգացման տեսություն» ու

3 **Поппер Карл**. Открытое общество и его враги. Том 2. Время лжепророков. Гегель, Маркс и другие оракулы. М., Международный фонд «Культурная инициатива», 1992, с. 103.

մարքսյան մատերիալիզմ, պատմաճանաչողության զույգ կշռույթները տարանջատելու նման անօգուտ փորձերի հիմքում ընկած էին մարդուց դուրս գտնվող կատեգորիաները՝ աշխարհագրական միջավայրը, օրգանիզմների բազմացման քանակական չափորոշիչները, տնտեսությունը և այլն: Դրանով մարդու՝ **բնության զավակ** լինելու մասին համոզմունքը դառնում էր «ամուր» հիմք նրա անցած պատմական ուղին իբրև օբյեկտիվ տեղաշարժերի իրադարձութենական պատմության պարզունակ նարրատիվ (narrative) ներկայացնելու համար:

Մինչդեռ՝ առանցքային ժամանակից մինչև մեր օրերը ձգվող **քաղաքակրթության պատմության** ողջ ժամանակահատվածը ոչ թե բնության կողմից մարդուն, այլ գիտակից ու կամային էակ հանդիսացող մարդու կողմից բնությունն ու իր սեփական կեցությունը բարեփոխելու գործընթաց է: **Ուրեմն՝ ինչպե՞ս կարելի է ճանաչել գիտակցություն և կամք ունեցող ուսումնասիրության առարկայի անցած ուղին՝ գիտակցությունից զուրկ իրերի վերաբերյալ վերջինիս ստեղծած պատկերացումների հիման վրա**...

Եվ նման պարագայում այդ ո՞վ և ինչպե՞ս է որոշում, թե դետերմինիզմի առարկայական-օբյեկտիվ կշռույթների երկար շղթայում ո՞րն է առաջնային եղել մեզանից վաղուց հեռացած սերունդների վարքի շարժառիթներում, եթե պատմության հորձանուտի մակերևույթին լողացող ֆենոմենների բաղկացած փաստերի արտաքին-իրադարձութենական կողմը համահարաբերվում է ոչ թե դրանց հեղինակի՝ մարդու **գործողությունների** իմաստային բովանդակությանը, այլ նրանից դուրս գտնվող այլ իրողություններին: Ուրեմն՝ քանի դեռ իր իսկ թողած տեքստերի հիման վրա մենք հարց չենք տվել անցյալի մարդուն ու պարզել, թե որո՞նք են եղել իր քայլերի իրական շարժառիթները, օբյեկտիվիստական ելակետից հնարավոր չէ բացահայտել դրանց կոնկրետ պատճառները: Որովհետև անցյալի մարդու փոխարեն ոչ ոք ի զորու չէ պատասխանելու, թե տվյալ միջավայրում և տվյալ ժամանակահատվածում դրանցից որո՞վ է առաջնորդվել կոնկրետ գործողության հեղինակը և ինչու՞ է այդպես վարվել: Ուստի՝ բանականությամբ ու լեզվով օժտված գիտակից էակի գործողությունները ոչ թե պետք է **ուսումնասիրել**, այլ **հասկանալ**՝ մեր հարցերն ուղղելով ոչ թե պատմական տեքստերում արդեն իսկ սուբյեկտիվացված «օբյեկտիվ իրողություններին», այլ դրանց մասին անցյալի մարդու թողած **հետքերին**: Ու քանի որ սուբյեկտիվ են ինչպես անցյալի մարդկանցից մնացած հետքերը, այնպես էլ դրանց՝ մերօրյա ընկալումները, ապա բնագիտական ճանաչողության պատճենումով իրականացվող՝ սուբյեկտիվիզմի կրկնակի օբյեկտիվացումը ճանաչողության պրոցեսը տեղափոխում է **մետաֆիզիկական տիրույթ**:

Անշունչ առարկաների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների օբյեկտիվության հանդեպ հավատի տեղափոխումը մարդու մասին գիտությունների ոլորտ և օբյեկտիվիստական պատմաճանաչողության ձևավորումը գիտականության չափորոշիչներով քողարկված մետաֆիզիկայի նոր դրսևորում էր, ինչը, շնորհիվ գերմանացի մեծ պատմագետ **Լեոպոլդ ֆոն Ռանկեի**, 19-րդ դարի կեսերից լայն տարածում գտավ ինքնուրույն գիտակարգի վերածվելու փորձեր անող պատմագիտության մեջ: Բայց

Լ. Ռանկեի օբյեկտիվիզմի իրական ուժը ոչ թե նման պարզունակ մեթոդաբանական ելակետն էր, այլ պատմաճանաչողության ասպարեզում եզակիի ու անկրկնելիի փնտրտուքի սկիզբը դրած **գերմանական իստորիզմը**: Ուստի՝ Լ. Ռանկեն իր թևավոր դարձած «**ինչպես է եղել իրականում**»-ի (wie es eigentlich gewesen ist) միջոցով հետին պլան մղեց անցյալի եղելությունների պատճառների մեջ խորանալու խնդիրը՝ այն սահմանափակելով բարեխիղճ նարրատիվով բավարարվող իր ճանաչողական իդեալով: Ժամանակի պատմագիտության այս խիստ սահմանափակ իդեալը միանգամայն ձեռնտու էր ինչպես 19-րդ դարում նրա իմացական տարածք ներխուժած մարդու մասին այլ գիտություններին, այնպես էլ մտահայեցողականի ու համընդհանրականի տիրույթից պատմագիտությանը «դասեր տալու» իր սովորույթից չհրաժարվող փիլիսոփայությանը, որոնք երկուսն էլ պատմագետին վերագրում էին «փինաչի» արհեստավորի, իսկ իրենց՝ «հանճարեղ» ճարտարապետի դերակատարություն: Դրանով պատմագիտության համար ավելորդ համարվեց սովորական երեխային անգամ խիստ հետաքրքրական՝ «**ինչու՞ է եղել այդպես**»-ը, և իհարկե՝ «ի՞նչ կարող էր տեղի ունենալ ըստ անհրաժեշտության կամ պատահականության»[4] երկընտրանքը: Ուստի՝ ժամանակին զգալի առաջընթաց արձանագրած պոզիտիվիստական պատմաճանաչողությունը նման խնդիրների լուծումը վերապահեց սոցիոլոգիային, իսկ մարքսիզմը՝ քաղաքատնտեսությանը և պատմական մատերիալիզմին: Մինչդեռ դրանցից առաջինն ուսումնասիրում է ներկան, իսկ երկրորդներն առնչվում են միայն մարդկության անցյալի խիստ որոշակի շերտերին՝ ի դեմս տնտեսության ու փիլիսոփայության պատմության:

Ավելին՝ երբ պատմությանն ուղղված իր հարցերի պատասխանները օբյեկտիվիստական պատմաճանաչողությունն առաջին հերթին փնտրում է մարդու կամքից ու գիտակցությունից դուրս դիտարկվող «օբյեկտիվ իրողությունների» համատեքստում, դրանց տակ հասկացվող վաղուց ավարտված գործընթացները փաստորեն զրկվում են ժամանակի միջով սերունդների հաղորդակցման համար անհրաժեշտ մարդկության մեծագույն ձեռքբերումից՝ **լեզվից**: Մնում է իմաստազուրկ փաստերի մեխանիկական ընկալումից բխող իրադարձություն-ֆենոմենների մակերեսային նկարագրությունը՝ շրջանցելով վերջիններիս մեջ սեփական միտքն ու կամքը ներդրած անցյալի մարդու համար միայն հասանելի «ինչու՞ է եղել այդպես»-ը: Արդյունքում՝ օբյեկտիվիստական պատմաճանաչողությունն անցյալի մարդուն վերածում է կրկնակի հանգուցյալի, որովհետև վերջինիս գործողությունների շարժառիթների բացահայտումն իրականացնում է ոչ թե նրա մտքերը **հասկանալու**, այլ գոյություն չունեցող անցյալի և գոյություն ունեցող, այսինքն՝ օբյեկտիվ ներկայի միջև արհեստական և շինծու կամուրջներ կառուցելու միջոցով:

Դա է պատճառը, որ ժամանակի պատմագիտության մեջ գերակայող Լ. Ռանկեի հայեցակարգի վրա **տեղադրված**՝ իր տնտեսական պատճառականության սկզբունքի ակնհայտ չարաշահումով Կ. Մարքսն այդպես

4 Ավելի մանրամասն տե՛ս **Ալբերտ Ա. Ստեփանյան**, Տարտամ անցյալականությունից դեպի պատմություն,... «Վէմ», 2014, N 1, էջ 27:

էլ «չնկատեց» այն իրողությունը, որ «որոշ գաղափարներ, և հենց նրանք, որոնք կազմում են մեր գիտական գիտելիքը, ավելի հիմնարար են, քան արտադրության բարդ միջոցների մեծ մասը»[5], որովհետև, եթե մարդկությունը կորցնի այդ գաղափարները, ապա կվերածվի վայրենիների հոտի: Եվ վերջնարդյունքում՝ ինչպես «...Մարքսը թերագնահատեց **ազատության թագավորության** ուժը և **անհրաժեշտության թագավորության** հանդեպ հաղթանակի հասնելու նրա շանսերը (ընդգծումները մերն են–Գ.Խ.)»[6], այնպես էլ նրա դրույթները հետագայում յուրացրած խորհրդային պատմագրությունը իմաստազուրկ դոգմայի վերածեց իր ուսումնասիրության օբյեկտի նման պարզունակ ընկալումը:

Ուստի այսօր՝ մարքսյան գաղափարախոսական շղարշի արտաքին պատյանից ազատվելուց հետո, հետխորհրդային Հայաստանում պատմագիտությանը մնացել է միայն իստորիզմի նախնական՝ ռանկեական ընկալումը, ինչը, մնալով անշարժ ու քարացած վիճակում, անհաղորդ է նաև այդ ասպարեզում հետագայում **Ֆ. Մայնեկեի** և այլոց արձանագրած ձեռքբերումներին:

Օբյեկտիվ ճանաչողության հասնելու հնարավորության մասին նման անքննադատ հավատի և 21-րդ դարը թևակոխած Հայաստանի մերօրյա պատմաբանների ճնշող մեծամասնության ճանաչողական մեկնակետերի **փաստացի նույնականությունը** հաստատվում է երկուսին էլ բնորոշ հետևյալ պարզունակ մոտեցումների հպանցիկ թվարկումով.

Առաջին՝ ներկայումս գոյություն չունեցող պատմական իրականության դիտարկումն իբրև **օբյեկտիվ իրականություն** և նման խախուտ ելակետի հիման վրա նրա ճանաչողության արդյունքի՝ ստացված գիտելիքի օբյեկտիվության սկզբունքի ֆետիշացումը՝ անցյալի եղելության սոսկ մտովի վերարտադրվող, այսինքն՝ սուբյեկտիվ պատկերը նույնացնելով օբյեկտիվ իրականության հետ[7],

Երկրորդ՝ դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին հոգեբանության հիմնադիրներից **Վ. Վունդտի** կողմից մերժված **արտացոլման տեսության**[8] օգնությամբ սկզբնաղբյուրում առկա տեղեկույթը մտովի ընկալելու և նրա բովանդակությունը «վերականգնելու» մասին թյուր համոզմունքի միջոցով այն «գիտական գիտելիքի» վերածելու հնարավորության վերաբերյալ **ատավիստական** և լիովին **սխալ** պատկերացումների պահպանումը,

Երրորդ՝ «օբյեկտիվ իրականության» մասին ստացված «գիտական գիտելիքի» տարանջատումը հեղինակային «Ես»-ի միջամտությունից՝ անաչառությունը **ճշմարտության**[9] հետ նույնացնելու, պատմագետի հանրային «Ես»-ի անհաղթահարելիության փաստն անտեսելու և սեփական իմա-

5 **Поппер Карл**. Открытое общество и его враги. Том 2. с. 128.

6 Նույն տեղում, էջ 129:

7 Ավելի մանրամասն տես **Смоленский Н.И**. Теория и методология истории, 3-е издание. М. Издательский центр «Академия», 2010, с. 175.

8 Արտացոլման տեսության քննադատությունը տես «ՎԷմ»-ի ներկա համարում հրապարակվող մեր «Պատմության գաղափարը Յոհան Դրոյզենից մինչև Ռոբին Քոլինգվուդ» ուսումնասիրության մեջ:

9 Այն փաստը, որ ճշմարտությունն անաչառությունից տարանջատել են դեռևս Լ. Ռանկեի աշակերտները, մասնավորապես՝ **Գեորգ Ջիբելը**, մինչ օրս անտեսվում է երևակայական «օբյեկտիվության» պարտեզներում սեփական գիտելիքների բացակայությունը ցուցադրող որոշ պատմաբանների կողմից: Այդ մասին ավելի մանրամասն տես **Смоленский Н.И**., նշվ.աշխ., էջ 180.

ցական մերկությունը քողարկող նման «թզի տերևը» որպես **օբյեկտիվության չափանիշ** դիտարկելու միջոցով:

Հարց է առաջանում՝ ո՞րն է անգամ 19-րդ դարում այդպես էլ անկատար երազանք մնացած Լ.Ռանկեի այս ճանաչողական իդեալի և մարքսիզմի արտաքին-գաղափարախոսական շղարշը հաղթահարած, բայց այսօր էլ նրա հիմքը կազմող պարզունակ օբյեկտիվիզմի վրա խարսխվող արդի հայ պատմագիտության սկզբունքային տարբերությունը: Պատասխանը միանշանակ է՝ ճանաչողական գետնի վրա **չկա՛** այդպիսի տարբերություն, այսինքն՝ հայաստանյան պատմագիտությունն այսօր էլ գտնվում է 19-րդ դարի կեսերին ձևավորված ու մարքսիզմի «խողովակով» մեզ փոխանցված, սակայն գիտության մեջ բավականին կարճ կյանք ունեցած ճանաչողական իդեալի մակարդակին:

Արդյունքում՝ ամեն ինչում «երկաթյա տրամաբանություն» փնտրող մարքսյան դետերմինիզմի փոխարեն մեզանում աստիճանաբար սկսել է գերիշխել նկարագրական մտասևեռումի առավել պարզունակ տարատեսակը՝ սկզբնաղբյուրում առկա տեղեկույթի ինքնանպատակ վերարտադրությունը, որի ծավալների շարունակական աճը տարտամ անցյալականությունն աստիճանաբար միախառնել ու նույնացրել է գիտական պատմության հետ: Տարտամ անցյալականության մեխանիկական վերարտադրության արդյունքում մերօրյա «գիտնականների» աշխատություններում փաստորեն վերացել են տարբեր դարաշրջանների մարդկանց՝ միմյանցից տարբերվող մտածողության **հասկացման**, դրանից բխող՝ նրանց գործողությունների շարժառիթների **ըմբռնման** աշխատակարգերը, ինչի հետևանքով Եդեմի պարտեզներում **Ադամի** ու **Եվայի** մերկության ընկալումը մեզանում այսօր փաստորեն նույնացել է 21-րդ դարի մեգապոլիսների գլբոսայգիներում նույն տեսքն ընդունող նուդդիստների պահվածքի գնահատման հետ: Արտաքուստ՝ իբրև «**պատմական փաստեր»՝** մարդու պահվածքի նման դրսևորումներն, իսկապես որ, նույնական են. տարբերությունն ընկալելի է միայն ներքուստ՝ եդեմական անմոռաց զույգի և այֆոններով գործառող ժամանակակից նուդդիստների մտածողության համակարգերի, դրանցից բխող կամային ակտերի, այսինքն՝ իրադարձությունն իբրև գործողություն ընկալելու տիրույթում: Իմացական մերկության այս ակնառու դրսևորումը վկայում է անկախ Հայաստանում պատմության՝ որպես գիտության, ակնհայտ **պրոֆանացիայի** մասին:

Արդի հայ պատմագիտությանը բաժին ընկած նման անմխիթար վիճակի հաղթահարման ուղիների և միջոցների երկարատև որոնումները մեզ բերել են այն հետևությանը, որ գիտականության ներկա նմանակումները հնարավոր է հաղթահարել՝ **մտովի վերապրելով** Լ. Ռանկեի ժամանակներից մինչև մեր օրերը համաշխարհային պատմագիտության անցած ուղու հիմնական շրջափուլերը: Այս գործընթացի առաջին հանգրվանը ուսումնասիրության այնպիսի տեսական ուղենիշերի որդեգրումն է, որոնք սկիզբ են առնում հայ պատմագիտական մտքի և գիտական ճանաչողության ընդհանուր պրոցեսի միջև առաջ եկած խզվածքի «հատույթից», այսինքն՝ պատմագիտության զարգացման այն հանգրվանից, երբ մենք հեռացանք 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի 20-30-

ական թվականները մեզ հետ միասին մարդկության ապրած գիտաճանաչողական գործընթանցների ընդհանուր հունից և զինվելով օբյեկտիվիստական պատմաճանաչողության վրա հաստատված տնտեսական դետերմինիզմի «մահակով»՝ սկսեցինք ջախջախել այն ամենը, ինչն անհասկանալի էր մեզ համար:

Նման վերադարձն անպայման պետք է զուգորդվի ավելի քան 1.5 հազարամյակի պատմագիտական մտքի գրավոր-տեքստային ավանդույթ ունեցող հայ հանրույթի անցած ուղու գլխավոր առանձնահատկության՝ մտքի կամ ինտելեկտուալ պատմության հարստագույն ատաղձի նորովի իմաստավորման հետ, ինչը հնարավորություն է տալիս անցյալի ճանաչողության բանալիները փնտրել ոչ թե օտար «բնորդների», այլ սեփական մշակութային ժառանգության մեջ:

Հիմնվելով վերոբերյալ հաստատումների վրա՝ կարող ենք հստակեցնել առկա փակուղու սեփական գնահատականը. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ոչ միայն Հայաստանում, այլև ողջ հետխորհրդային տարածքում պատմագիտական միտքը կանգ է առել և անիմաստ ու զավեշտական պտույտներ է գործում 19-րդ դարի կեսերի պարզունակ օբյեկտիվիզմի շրջագծում: Նրանից դուրս գալու համար ներկայումս նախ՝ հարկավոր է անցնել ռանկեական օբյեկտիվիզմի հաղթահարման միջոցով հաջորդ քայլը ձեռնարկած **Յոհան Գուստավ Դրոյզենի** պատմաճանաչողության խորքային ընկալմանը և ապա շարունակել մեր ընթացքը դեպի 20-րդ դար՝ մտովի վերապրելով պատմագիտության անցած ուղին առնվազն մինչև Աննալների դպրոցի[10] ու բրիտանացի մեծ պատմագետ **Ռոբին Քոլինգվուդի** ժամանակները:

Պատմագիտության ձևավորման ու կայացման գործընթացի ուսումնասիրությունը և ձեռք բերված արդյունքների յուրացումը Յո. Դրոյզենի ժամանակներից սկսելու և ապա՝ նրա զարգացման հաջորդական հանգրվանները մտովի վերապրելու անհրաժեշտության գիտակցումը ոչ միայն մեր երկարատև որոնումներից բխող համոզմունքն է, այլև ստեղծված իրավիճակից դուրս գալու փաստորեն՝ միակ ելքը: Քանզի իրենց բաժին ընկած ճիշտ նույն իրողությունն այսօր արձանագրում ու անկեղծությամբ խոստովանում են նաև մեզ նման ճանաչողական փակուղիների մեջ հայտնված՝ հետխորհրդային տարածքի մեր գործընկերները: Նրանցից մեկը՝ Ի. Սավելևան, իր «Մեթոդի ձեռքբերումը» հրապարակման մեջ անկեղծորեն խոստովանում է. «Ռուսաստանում ելքը հումանիտար գիտության երկարատև մեկուսացման ժամանակահատվածից, ինչը տեղի ունեցավ 1990-ականների սկզբին, որոշակի իմաստով արհեստավարժ հանրությանը վերադարձրեց պատմական գիտելիքը գիտության վերածվելու ժամանակաշրջանին, այսինքն՝ անմիջականորեն **Դրոյզենի ժամանակներին**»[11] (ընդգծումը մերն է-Գ. Խ.):

Ուստի այս անհետաձգելի առաջադրանքի իրականացումը տեղից շար-

---

10 Աննալների դպրոցի հիմնական գիտատեսական հարցադրումներն արդեն ներկայացվել են մեր հանդեսում լույս տեսած **Սմբատ Խ. Հովհաննիսյանի** հրապարակումներում: Տես «Վէմ», 2011, N 1 (33), N 2 (34), 2012, N 1 (37):

11 **И. М. Савельева.** Обретение метода. В кн.: **И. Г. Дройзен**. Историка. Энциклопедия и методология истории. Санкт-Петербург. Издательство «Владимир Даль», 2004. с. 6.

ժելու նպատակով շարունակում ենք պատմության տեսության ու մեթոդաբանության հիմունքների վերաբերյալ «Վէմ»-ի նախորդ համարի «Հիմնաքարեր» բաժնում սկսված դիսկուրսը և այն տեղափոխում Յոհան Դրոյզենի նախաձեռնած ու նրա հաջորդների շարունակած մեծ գործի ներկայացման և քննարկման հարթություն:

Խմբ.:

HOPELESSNESS OF OBJECTIVIST EPISTEMOLOGY OF HISTORY

Editorial

БЕЗЫСХОДНОСТЬ ОБЪЕКТИВИСТСКОГО ПОЗНАНИЯ ИСТОРИИ

Редакторская статья